

Անվճարունակության մասին ՀՀ օրենսդրության գարգացման հեռանկարները

Այս հոդվածում փորձ է կատարված տալ երեք հիմնական հարցերի պատասխանները՝

1. Ինչու չի կարելի կիրառել գործող օրենքը այն տեսքով, ինչպիսին կա.
2. Ինչու չի կարելի ընդունել քաղաքացիական դատավարության օրենսգրքի ենթաբաժնի նախագիծը այն տեսքով, ինչպիսին կա.
3. Ինչու է անհրաժեշտ նոր օրենքի կամ օրենսգրքի ընդունումը:

Նախաբան

Երկրի տնտեսության «առողջության» չափանիշներից մեկը պարտավորությունների կատարման աստիճանն է: Այն պետությունը, որը պարտքերի արագ և անվերապահ գանձման արդյունավետ մեխանիզմներ է կիրառում, վստահություն է ներշնչում տնտեսվարող սուբյեկտներին: Որպես այդ վստահության հետևանք ապահովվում են ցածր բանկային տոկոսադրույքը, գրավով չապահովված վարկավորման լայն կիրառումը, ապառիկ գործարքների մեծ ծավալները և այլն:

Հակառակ պարագայում, երբ պետական ինստիտուտները թույլ են, երբ դատարանները որոշումներ են ընդունում ուշացումով, սնանկացման գործընթացները ձգձգվում են, որի արդյունքում վարկատուները սկսում են վարկեր տրամադրել ավելի ու ավելի ծանր պայմաններով, որպես գրավ ընդունում միայն բարձր լիկվիդայնություն ունեցող գույք, ցածր գնահատում գրավականի արժեքը, գործնականում չեն կնքվում վարկային պայմանագրեր առանց գրավով ապահովման, գործարքների գերակշիռ մասը կատարվում է կանխիկով, չեն կնքվում երկարաժամկետ հեռանկարային պայմանագրեր: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտները սկսում են գործարքներ կնքել միայն հանրաճանաչ ընկերությունների հետ, ինչը դանդաղեցնում է տնտեսության զարգացումը և արագորեն բերում մենաշնորհների ձևավորմանը:

Ակտիվների սառեցման և քաղաքացիական շրջանառությունից դուրս մղվելու հետևանքով պետությունը, սովորաբար որպես ամենախոշոր պարտատեր, առավել շատ է տուժում, իսկ դրա արդյունքում վտանգվում են տնտեսական ենթակառուցվածքներն ընդհանրապես:

Ակտիվների՝ գույքային շրջանառության վերադարձի հիմնական ճանապարհներից է սնանկացման ինստիտուտի կիրառումը, որը քաղաքակիրթ շուկայի ուղեկիցն է:

Չվճարումների ներկա համընդգրկուն ճգնաժամը հայաստանյան տնտեսությունը ցնցող նմանատիպ ճգնաժամերից ամենատուն է՝ սկսած 1992 թվականից: Այսօրվա ճգնաժամի յուրահատկությունը կայանում է նրանում, որ բացի արտադրության վրա ունեցած կործանարար ազդեցությունից, այն ընդգրկել է նաև երկրի ֆինանսա-բյուջետային համակարգը՝ առաջ բերելով հասարակության մեջ լուրջ սոցիալական լարվածություն: Այսօր խոսք է գնում ոչ միայն արտադրության վիճակի մշտական վատթարացման և գիտատեխնիկական պոտենցիալի քայքայման, այլև սոցիալական դեստաբիլիզացիայի ռեալ վտանգի մասին, ինչը հղի է անկանխատեսելի քաղաքական հետևանքներով:

Հենց սնանկության պրոցեդուրաների արդյունքում է, որ պետք է տեղի ունենա սոցիալական ոլորտի օբյեկտների ազատագրումը, անշարժ գույքի օբյեկտների քաղաքացիական շրջանառության մեջ ներառումը՝ ռեալ պահանջարկ ունեցող արտադրանք թողարկող գործող կոմպլեքսների պահպանման հետ միաժամանակ:

Բացի այդ, սնանկությունը սեփականության վերաբաշխման ձևերից մեկն է սեփականության փոխանցումը անարդյունավետ սեփականատերերից արդյունավետ սեփականատերերի: Սնանկության հարցը առավելապես ինվեստիցիոն-գույքային է, քան ֆիսկալ: Սնանկության ընթացակարգերը հնարավորություն են ստեղծում սնանկ կազմակերպության լիկվիդային գույքի բազայի հիման վրա ստեղծել նոր, էֆեկտիվ ընկերություններ, հնարավոր է՝ պետական մասնակցությամբ:

Հայաստանում սնանկացման ինստիտուտի կիրառման գործընթացի սկիզբն իրավացիորեն համարվում է 1995 թվականը, երբ ընդունվեց «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքը (1995թ. հունիսի 15): Սնանկացման ինստիտուտը՝ հանդիսանալով ազատական տնտեսության և ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից մեկը, տվյալ ժամանակահատվածում չէր կարող արդյունավետ կիրառում ունենալ: Նոր սկիզբ առած գործընթացը թե սկզբնական շրջանում, թե մինչ օրս ունեցել է որոշակի թերություններ: Դրա համար առկա են եղել թե օբյեկտիվ և թե սուբյեկտիվ պատճառներ: Սա պայմանավորված էր առաջին հերթին դատական համակարգի թերի աշխատանքով: Սնանկացման գործընթացը ՀՀ դատական համակարգի համար նոր ինստիտուտ էր, դատավորները չունեին որևէ պրակտիկա այս բնագավառում, և կարոտ լինելով կառուցվածքային բարեփոխումների՝ դատական համակարգը չէր կարող համարժեքորեն արձագանքել տնտեսական նոր պայմաններին և պահանջներին: Խոսքը գնում է ինչպես նոր ձևավորվող դատաիրավական համակարգի մասին, այնպես էլ մարդկային ռեսուրսների բացակայության մասին:

Լրջագույն պրոբլեմ էր սնանկության գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի ոչ պատշաճ որակը: Սնանկացման օրենսդրությունը

սահմանում է սնանկացման, ֆինանսական առողջացման կամ լուծարման գործընթացը, որն անցնում է դատական վերահսկողության ներքո: Սակայն այսօրվա օրենսդրական բազան հեռու է կատարյալ լինելուց: Մրցութային կառավարիչներին ներկայացվող պահանջների անբավարարության և նրանց լիցենզավորման կարգի բացակայության հետևանքով հաճախ մրցութային կառավարիչներ էին դառնում ոչ կոմպետենտ մարդիկ: Չնայած 1996թ. դեկտեմբերի 3-ին ընդունվեց և 1997թ. մարտի 1-ից գործողության մեջ դրվեց «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքը, սակայն այն ևս ուներ բազմաթիվ թերություններ:

Այս վիճակը երկար հանդուրժել չէր կարելի և 1999թ. հունվարի 30-ին ընդունվեց դատարանների նախագահների խորհրդի թիվ 5 որոշումը, որով առաջարկվեց դատավորներին կասեցնել իրենց վարույթում գտնվող սնանկության վերաբերյալ գործերի վարույթները՝ մինչև խնդրի օրենսդրական կարգավորումը:

ԴԼԽ որոշումը ուներ իր իրավական հիմնավորումը:

ՀՀ-ում իրականացված դատաիրավական բարեփոխումների արդյունքում ընդունվեց քաղաքացիական և քաղաքացիական դատավարության նոր օրենսդրությունը, ստեղծվեց նոր դատական համակարգը, այդ թվում նաև ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարանը, հնարավորություն ստեղծվեց պատշաճ մակարդակով իրականացնել տնտեսական, և մասնավորապես սնանկացման մասին օրենսդրության կիրառումը: Սակայն առաջացած օրենսդրական հակասությունները հնարավոր դարձրեցին այս գործընթացի կասեցումը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71 հոդվածի՝ իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու հիմքերը և կարգը սահմանվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Նույն դրույթները ֆիզիկական անձանց վերաբերյալ արձանագրում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28 հոդվածը: Սակայն գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի պարունակում նշված հարցերի կարգավորումը նախատեսող գլուխ, այսինքն գործ ունենք օրենսդրական կազուսի հետ: Արդյունքում ունենք «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» դեռևս գործող և Ազգային ժողովի կողմից չվերացված օրենքը, մյուս կողմից սույն հարաբերությունների կարգավորման վերաբերյալ նոր քաղաքացիական օրենսգրքի հղումը դատավարական օրենսգրքի վրա:

Դատարանների նախագահների խորհուրդն արձանագրեց սույն օրենսդրական հակասությունը, արդյունքում սնանկացման գործընթացը Հայաստանում դադարեց գործելուց: Թե ինչպիսի աղետալի հետևանքների կարող է բերել սնանկացման ինստիտուտի բացակայությունը շուկայական տնտեսությանը, այն էլ ոչ քաղաքակիրթ շուկայի պայմաններում, ակնհայտ է:

Սա թերևս ժամանակավոր դադար էր, որը հնարավորություն էր ստեղծելու վերաիմաստավորել անցած ուղին, արձանագրել սխալները և փորձել անհրաժեշտ հետևություններ անել: Սակայն չնայած անցել է մեկ և կես տարի, որևէ տեղաշարժ այս բնագավառում բացակայում է: Հիշյալ հարցերի լուծման ժամկետների անհայտության պայմաններում սնանկության վերաբերյալ բոլոր գործերի վարույթների կասեցումն անհնար էր երկարաձգել անորոշ ժամանակով: Դրա արդյունքում ոչ միայն տուժում են պարտատերերը և սնանկ ճանաչված պարտապանը, այլև վտանգվում է ողջ տնտեսությունը, մեծանում է փոխադարձ չվճարումների ծավալը, կորում է ներդրողների վստահությունը հայկական տնտեսության նկատմամբ:

Նշված մտահոգություններից զերծ չէր կարող մնալ նաև դատական համակարգը: Սա էր հիմնական պատճառը, որ 2000թ. հունիս ամսին ՀՀ դատավորների միությունը ստեղծեց սնանկության հարցերով զբաղվող դատավորների աշխատանքային խումբ:

Ի նկատի ունենալով վերը շարադրված մտահոգությունները և նպատակ ունենալով աջակցել սնանկության բնագավառում պատշաճ կարգավորման հաստատմանը, սնանկության հարցերով զբաղվող ՀՀ դատավորների միության աշխատանքային խումբը իր 16.06.2000թ. անդրանիկ նիստում ընդունեց հայտարարություն, որի եզրափակիչ մասում նշված էր.

Դատավորների միության աշխատանքային խումբը՝

« - արձանագրում է սնանկացման գործընթացի վերսկսման անհրաժեշտությունը և այդ նպատակով համապատասխան քննարկումների կազմակերպման անհրաժեշտությունը դատարանների նախագահների խորհրդի հետ.

- գտնում է անխուսափելի սնանկության վերաբերյալ օրենսդրության հետագա կատարելագործումը.

- անհրաժեշտ է համարում հրատապ միջոցառումներ իրականացնել դատավորների և մրցութային կառավարիչների սնանկության վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակման և իրականացման ոլորտում.

- անհրաժեշտ է համարում դիմել շահագրգիռ միջազգային և օտարերկրյա կազմակերպություններին՝ ուսումնական ծրագրերի իրականացման համար աջակցություն ստանալու խնդրանքով:»

Հայաստանում սնանկության գործընթացի թերությունների հիմնական պատճառն այն է եղել, որ թե օրենքները մշակողները, թե դրանք կիրառողները մինչև վերջ չեն պատկերացրել, չեն իմաստավորել այն լուծումները, որոնք տրվելու են սնանկության հիմնական հասկացությունների կամ մեխանիզմների վերաբերյալ: Սա հետևանք է այն բանի, որ մենք մինչ օրս չենք փորձել լրջորեն ուսումնասիրել սնանկության հայեցակարգը: Հարկ է նշել, որ գրեթե բոլորս համեստորեն ասած կարիք ունենք շատ բան սովորելու:

Իսկ հասկանալու համար հայեցակարգը, անհրաժեշտ է ուսումնասիրել ակունքները, ինստիտուտի զարգացման պատմությունը, դրա ստեղծման պատմական և տնտեսագիտական անհրաժեշտությունը:

Պատմական ակնարկ

Անվճարունակության և սնանկության իրավական կարգավորման խնդիրն ունի բազմադարյան պատմություն: Մրցութային իրավունքի ծագումն ու զարգացումը կապված է եղել ապրանքային և վարկային հարաբերությունների զարգացումից: Մրցութի սաղմնային վիճակին կարելի է հանդիպել դեռևս հռոմեական իրավունքում, սակայն այն ժամանակ խոսք կարող էր գնալ սուկ մրցութային հարաբերությունների ոչ կատարյալ և թերզարգացած էլեմենտների մասին: Եվ դա բացատրելի է, քանի որ վարկի վերադարձման մեխանիզմների մշակման, անբարեխիղճ պարտապանի գործունեության դադարեցման, մնացած գույքի արդյունավետ բաշխման համար անհրաժեշտ է առնվազն զարգացած գույքային հարաբերություններ, ինչպես նաև մեխանիզմներ, որոնք ապահովում են գույքի ռեալ գնահատումը: Նման խնդիրները այն ժամանակահատվածի տնտեսության համար պրակտիկորեն անլուծելի էին: Արդյունքում հին ժողովուրդների մոտ պարտավորությունների ապահովումը կրում էր անձնային բնույթ. վարկ ստանալու համար պլեբեյն ստիպված էր լինում գրավադրել իրեն և իր ընտանիքը: Պարտատերը՝ բավարարում չստանալու պայմաններում, իրավունք էր ձեռք բերում իր հայեցողությամբ օգտագործել պարտապանին, այդ թվում տնօրինել նրա մարմինն ու կյանքը: Այս դրույթները չէին կարող ժամանակի ընթացքում չզարգանալ: Մասնավորապես, արդեն 12 աղյուսակների օրենքը պարտապանի համար սահմանում է որոշակի ժամկետ (30 օր), որի ընթացքում նա պետք է հայթայթեր միջոցներ՝ պարտավորության կատարման համար: Միայն այս ժամկետից հետո պարտապանի նկատմամբ կարող էին կիրառվել որոշակի միջոցներ՝ բռնագանձումը նրա անձի կամ ունեցվածքի վրա տարածելու ձևով:

Ժամանակի ընթացքում սկսեցին վերանալ անձնային ապահովման միջոցները, և դրանց կիրառումը սահմանափակվեց միայն պարտապանի անազնիվ վարքագծով: Այսպես, 326թ. Հռոմում հրապարակվեց օրենք, որն

արգելում էր անձի նկատմամբ բռնագանձում տարածել, եթե պարտապանը երդում էր տալիս, որ որևէ գույք չի թաքցնում և ողջ ունեցվածքը տալիս է պարտատիրոջը: Ժամանակի ընթացքում հռոմեական մրցութային իրավունքը ստեղծեց նորմեր, որոնք վերաբերում էին գույքի վրա բռնագանձում տարածելուն, սակայն այդ գույքային բռնագանձումները չէին ազատում պարտապանին՝ նրա անձի վրա բռնագանձում տարածելու իրավունքից:

Մրցութային իրավունքի և պրոցեսի զարգացման հիմնական խթանը առևտուրն էր: Այդ իսկ պատճառով այդ զարգացմանը շատ մեծ ներդրում ունեցավ միջնադարյան Իտալիան: Միջնադարյան Իտալիայի առևտրային քաղաքների իրավունքը սահմանել է ժամանակակից մրցութային պրոցեսի հիմնական սկզբունքները: Արդեն 9-10 դարերում առևտրային հարաբերությունները իտալական քաղաքներում հասան բավական բարձր մակարդակի: Բացի այդ գոյություն ունեւր մրցութային իրավունքի զարգացման նաև քաղաքական խթան՝ դա քաղաքների տարանջատվածությունն էր (պարտապանը հեշտությամբ կարող էր թաքնվել պարտատերերից մեկ ուրիշ քաղաքում, որը ինքնուրույն տարածք էր): Այս ամենը ստեղծեց մրցութային իրավունքի հստակ դրույթների մշակման և պարտապանի անձի փոխարեն նրա ունեցվածքի վրա բռնագանձում տարածելու ծայրահեղ անհրաժեշտություն: Իտալական իրավունքը պահպանեց կապը Հռոմեականի հետ, սակայն էականորեն փոփոխեց այն՝ դարձնելով ավելի կիրառելի. մտցրեց նոր ինստիտուտներ և տերմիններ; Իտալական իրավունքին ենք մենք պարտական հենց սնանկ „ռոլվՄՄՏՏ“, տերմինի գոյությամբ: Այսպես Իտալիայում անվանում էին փախուստի մեջ գտնվող պարտապաններին („bancus“, - կրպակ, գրասենյակ, առևտրային հիմնարկ, իսկ „ruptus“, -ը առաջացել է „rotto“, բառից, որը նշանակում է կոտրել, փակել գրասենյակը):

Իտալական քաղաքների մեծամասնության ստատուտներով մրցութային վարույթը կիրառվում էր միայն այն անձանց նկատմամբ, որոնք զբաղվում էին առևտրով, այսինքն ոչ առևտրային անվճարունակությունը չէր ճանաչվում: Պարտապանի համար վրա էր հասնում ինչպես գույքային, այնպես էլ անձնական հետևանքներ. նրան ենթարկում էին խոշտանգումների և որոշակի պախարակող պրոցեդուրաների: Անվճարունակության գործընթացի սկսման հիմնական առիթը պարտապանի փախուստն էր, սակայն որոշ ստատուտներ որպես հիմք դիտում էին նաև պարտապանի խոստովանությունը: Պարտատերերը ակտիվ մասնակցություն էին ունենում մրցութային վարույթում, քանզի նրանց էր փոխանցվում պարտապանի գույքի կառավարումը: Գույքի կառավարումը իրականացվում էր ընտրովի կոմիտեի կողմից: Սակայն Իտալական իրավունքը այս փուլում կանգ է առնում: Նա այդպես էլ մնում է առանձին քաղաքների իրավունք և չի բարձրանում Իտալական առևտրային իրավունքի մակարդակին: Դրան խանգարում էին քաղաքական պայմանները: Սակայն այս նվաճումները օգտագործվեցին

Արևմտյան Եվրոպայի այլ ժողովրդների կողմից, առաջին հերթին Ֆրանսիայում:

Այնուամենայնիվ Իտալական իրավունքը էական ազդեցություն է ունեցել Ֆրանսիական մրցույթային իրավունքի վրա: Մրցույթի մասին առաջին Ֆրանսիական օրենսդրական ակտերում խստացվում էին պարտապանի նկատմամբ կիրառվող սանկցիաները. մեծամասնությամբ այդ ակտերը պարունակում էին քրեական պատժիչ դրույթներ կանխամտածված սնանկության համար, ընդ որում գործում էր կանխամտածված սնանկության կանխավարկածը: Իտալական իրավունքի համաձայն առավել էական իրավասություններով էին օժտված պարտատերերը, հատկապես լայն իրավունքներ ունեին հաշտության համաձայնություն կնքելու առումով:

Գերմանիայում մրցույթային վարույթը կարգավորվում էր հիմնականում սովորութային իրավունքով: Վաղ Գերմանական պրոցեսի առանձնահատկությունը նրանում էր, որ հիմնական դերը տրված էր դատարանին, այլ ոչ կրեդիտորներին: Ժամանակի ընթացքում, ֆրանսիական իրավունքի ազդեցության ներքո, կրեդիտորները օժտվեցին որոշակի իրավասությամբ:

Յուրահատուկ բնութագիր էր կրում Անգլիական մրցութային իրավունքը: Այնտեղ դատավարությունը հիմնականում ընթանում էր վարչա-ֆինանսական պետական մարմինների վերահսկողության ներքո և շատ մեծ նշանակություն ուներ հաշտության համաձայնագիրը, որը կնքվում էր պարտապանի և կրեդիտորի միջև:

Ռուսաստանում մրցութային հարաբերությունների զարգացմանը խոչընդոտում էր երկրի հողագործության մակարդակը: Սակայն մրցութային պրոցեսը գոյատևում և զարգանում էր դեռևս վաղ ժամանակներից: Առաջին վկայությունները դրա մասին կարելի է տեսնել “Ռուսակայա պրավդա”-յում: Այսպես, Կարամզինի ցուցակում 69 հոդ. կարգավորում էր այն դեպքը, որ պարտատերը ունի մի քանի կրեդիտորներ և ինքը անվճարունակ է և չի կարող մարել իր պարտքը: Գումար ստանալու միջոց էր հանդիսանում պարտապանի վաճառքը սակարկության միջոցով, և գործում էր մի համակարգ, որը կարգավորում էր միջոցների բաժանումը կրեդիտորների միջև: Սույն հոդվածը կիրառվում էր ոչ բոլոր դեպքերում, այլ միայն այն դեպքում, երբ պարտապանը թաքցնում էր օտարերկրյա կրեդիտորից իր պարտատերերի իրական քանակը (ինչից կարելի է եզրակացնել, որ դեռ այն ժամանակ առկա էր չարամիտ սնանկության գաղափարը, որի դեպքում չէր կիռարվում 69 հոդ.): Ենթակա չէին վաճառքի այն պարտապանները, որոնք անվճարունակ էին դարձել իրադարձությունների անհաջող զարգացման հետևանքով և պարտապանները, որոնք ունեին մեկ կրեդիտոր: Այդ երկու պարտապանների կատեգորիաները ստանում էին պարտքերի մարման տարաժամկետում:

Հին օրենքների դրույթների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ դեռ այն ժամանակ ձևավորվել էր ժամանակակից մրցույթի

մասին հասկացությունը: Մրցութային իրավունքի հիմքում ընկած էր այն գաղափարը, որ այն փորձում էր պաշտպանել մրցութի ժամանակ մի քանի կրեդիտորների իրավունքները և անվճարունակության հիմքում պետք է դրված լինե՞ր պարտապանի գույքի անբավարարությունը: Այն դեպքում, երբ անվճարունակ պարտապանը ուներ մեկ կրեդիտոր, համարվում էր անվճարունակությանը մոտ կամ նման իրավիճակ, այսինքն սնանկության իրական սպառնալիք և շատ դեպքերում կիրառվում էին մրցութային օրենքները:

Այսպիսով, մրցութային հարաբերությունների հիմնական հատկանիշն էր պարտապանի գույքի անբավարարությունը, որը առաջացնում է մի քանի կրեդիտորների պահանջները բավարարելու որոշակի հերթականություն: Այդ հատկանիշների առկայությունը առաջ էր բերում արտադրական հարաբերությունների ծագում, որոնք կապված էին պարտապանի գույքի՝ դրա կառավարման և բաշխման, ինչպես նաև այդ խնդիրներով զբաղվող անձանց հետ: Մինչև 1649 թ. չկար որևէ օրենք, որը կարգավորում էր մրցութային հարաբերությունները Ռուսաստանում, չնայած այլ երկրներում դրանք արդեն գործում էին: Այսպես Իտալիայում մրցութային ստատուտները հայտնվեցին 1244 թ. Վենեցիայում և 1298թ. Գենուայում, Ֆրանսիայում մրցութային օրենքները՝ 1536, 1560 և 1609 թթ., Գերմանիայում կայսրական էդիկտները՝ 1531, 1540թթ., Անգլիայում մրցութային օրենքները՝ 1534, 1572 թթ. :

Ակնհայտ է, որ Ռուսաստանում այդ ժամանակ նման օրենքների անհրաժեշտությունը բացակայում էր: Այդ մասին է խոսում այն փաստը, որ «Սոբորնոյե ուլոժենիեն» պրակտիկորեն կրկնում էր այն, ինչ սահմանված էր դրանից 400 տարի առաջ “Ռուսկայա պրավդայում”: Փոփոխություններն աննշան էին. պարտապանի գույքի բաժանման ժամանակ առավելություն էր տրվում օտարերկրյա պարտատերերին և պետական գանձարանին:

Սակայն չնայած նման սահմանափակ օրենսդրական կարգավորմանը անվճարունակության հետ կապված խնդիրները գնալով արդիական էին դառնում: Իրականությունը առաջընթաց էր ապրում օրենքի նկատմամբ: Առևտրական հարաբերությունները գնալով բարդանում էին և առկա օրինադրույթները արդեն անբավարար չէին: Դրանք սահմանում էին միայն պարտապանի անվճարունակության ընթացքում իրականացվող ընդհանուր գործողությունները:

Սնանկության ինստիտուտի պատմական վերլուծությունը վկայում է, որ սկզբնապես առաջ էր քաշվում մեկ հիմնական նպատակ. պարտապանի գույքի լուծարում՝ պահանջատերերի պահանջները բավարարելու և իրավունքները վերականգնելու նպատակով: 20-րդ դարում պետությունների մեծամասնություններում օրենսդիրների մոտեցումները այս հարցում փոփոխություններ կրեցին, և առաջին պլան մղվեցին նաև այլ նպատակներ և խնդիրներ. ոչ թե լուծարել ձեռնարկությունը և նրա գույքի վաճառքի միջոցով բավարարել պահանջատերերի պահանջները, այլ ստեղծել

հնարավորություններ ձեռնարկության առողջացման համար և նրա գործունեության շարունակման՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ, ինչի արդյունքում կարելի է հասնել պարտատերերի պահանջների առավել չափով բավարարման:

Ավելի քան հարյուր տարի առաջ ամերիկյան օրենսդրությունը, իսկ այնուհետև նաև եվրոպական երկրներում, սնանկացման օրենսդրությունը գնաց պարտապանին պատժելու գաղափարախոսությունից հրաժարվելու ճանապարհով և վերջին տասնամյակներում արդեն քաղաքակիրթ շուկայի երկրները գնում են պարտապանի պարտավորությունների կառուցվածքի փոփոխության ճանապարհով:

Ինչու են զարգացած երկրները տասնամյակների պրակտիկայից ելնելով եկել այս եզրահանգման:

Դա առաջին հերթին այն բանի համոզումն է, որ գոյություն ունեցող բիզնեսի պահպանումը շատ ավելի կարևոր է, քան դրա հապշտապ լուծարումը, թեկուզև պարտատերերի պահանջների արագ բավարարման գնով: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս պարտապանին և պարտատերերին ավելի մեծ օգուտ ստանալ այս գործընթացից, քան սուկ լուծարման ժամանակ: Բացի այդ լուծարումը բերում է աշխատատեղերի կրճատման, իսկ առողջացման պայմաններում դրանք պահպանվում են:

1. «Մնանկության» օրենսդրության նպատակները

Հայաստանում շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց հատուկ կարևորություն են ստանում միկրոմակարդակում իրականացվող փոխազդեցությունները, այդ թվում շուկայի տնտեսական դինամիկան: Շուկան կառուցվածքային տեսանկյունից իրենից ներկայացնում է տնտեսական սուբյեկտների մշտական փոփոխության գործընթաց: Արտադրության տեխնոլոգիական բազայի տրանսֆորմացիան մի կողմից և սպառողների պահանջմունքների փոփոխությունը մյուս կողմից բերում են մի իրավիճակի, երբ երկարատև հեռանկարում ֆիրմաները անխուսափելիորեն փոխում են իրենց գործունեության տեսակները, իրենց գործունեության շուկաները: Շուկայի դինամիկան վկայում է այն մասին, որ անվճարունակությունը՝ ֆիրմայի կողմից իր պարտավորությունների հետագա կատարման անհնարիությունը, դա շուկայական մեխանիզմի պարբերական բնութագրիչն է: Ցանկացած շուկայական տնտեսությունում ժամանակ առ ժամանակ ծագում է իրավիճակ, երբ այս կամ այն սուբյեկտը՝ ի վիճակի չլինելով կատարել իր պարտավորությունները, ստիպված է լինում հայտարարել իր անվճարունակության մասին: Տնտեսական պրոցեսների դինամիզմը որպես բնականոն շուկայական տնտեսության կենսագործունեության մաս պահանջում է անվճարունակության իրավիճակի

պարբերաբար ծագում այս կամ այն ձեռնարկության համար: Անվճարունակությունը վերացնում է շուկայի ոչ կենսունակ տարրերը և դրանով իսկ ճանապարհ է հարթում առավել արդյունավետ գործող սուբյեկտների համար:

Ժամանակակից շուկայական տնտեսությունը իրենից ներկայացնում է տարբեր մակարդակների տնտեսական սուբյեկտների միջև առկա հարաբերությունների բարդ ցանց: Այսինքն յուրաքանչյուր տնտեսական սուբյեկտ ներքաշված է պայմանագրերի բարդ համակարգի մեջ, այդ իսկ պատճառով նրանիցից որևէ մեկի գործունեության մեջ առաջ եկած բարդությունները կամ նրա հեռանալը շուկայից անպայմանորեն անդրադառնում է ողջ տնտեսության վրա: Ընդ որում, որքան մեծ է եղել այդ տնտեսական սուբյեկտի ազդեցությունը նախկինում (այսինքն, որքան բարձր են եղել նրա տնտեսական գործունեության ցուցանիշները), այնքան մեծ ազդեցություն կունենա տնտեսության զարգացման վրա նրա հեռանալը շուկայից: Տնտեսական դաշտում սուբյեկտների տեղաշարժերի հնարավոր բացասական հետևանքները մեղմելու համար ժամանակակից հասարակությունը մշակել է մի շարք միջոցառումներ, որոնց հիմքը ցանկացած զարգացած երկրում կազմում է անվճարունակության մասին օրենսդրությունը՝ նորմերի ամբողջությունը, որոնք կարգավորում են սուբյեկտի շուկայից դուրս գալու պրոցեսը:

Անվճարունակության օրենսդրության խնդիրը կայանում է նրանում, որպեսզի խթանել տնտեսվարող սուբյեկտներին, մասնավորապես խոշոր կորպորացիաներին, ֆինանսական անկայունության հայտանիշների ի հայտ գալու դեպքերում ինքնուրույն պայքարել իրենց կոմպանիաների վերակազմավորման համար կամ ժամանակին հեռանալ բիզնեսից՝ մինչև այն պահը, երբ այդ հարցը ստիպված կբարձրացնեն նրա պարտատերերը: Այստեղից հետևում է, որ կամավոր սնանկության դեպքերի տոկոսային հարաբերակցությունը սնանկացած այլ անձանց թվի հետ անվճարունակության մասին օրենսդրության արդյունավետության ցուցանիշն է: Մասնավորապես, ԱՄՆ իրավաբանական համակարգի ուսումնասիրողները բերում են հետևյալ տվյալն այն մասին, որ անվճարունակության դեպքերի 90-95%-ը ԱՄՆ-ում տեղի է ունենում կամավորության հիման վրա:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ անվճարունակության մասին օրենսդրությունը շուկայական տնտեսության շրջանակներում սեփականության պաշտպանության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասն է: Քանի որ շուկայական տնտեսության սահմանադիր էլեմենտը սեփականության իրավունքն է, իրավական համակարգի՝ ընդհանրապես, և անվճարունակության մասին օրենսդրության հիմնական նպատակը՝ մասնավորապես, կայանում է նրանում, որպեսզի թույլ չտալ սեփականության փոշիացում սեփականատիրոջ ձևական կամ իրական փոփոխության պարագայում: Եթե տնտեսվարող սուբյեկտները պարբերաբար չեն ստանում

իրենց մասնաբաժինը սեփականությունից ստացվող եկամուտներից, կորցնում են գործելու ռեալ խթանները և դադարում են պաշտպանել գոյություն ունեցող համակարգը: Սա էլ իր հերթին բերում է շուկայի ճգնաժամի: Այդ իսկ պատճառով թե անվճարունակության օրենսդրությունը, թե իրավաբանական պրակտիկան կոնկրետ օրենքների կիրառման ընթացքում զարգացած արդյունաբերական երկրներում ուղղված են նման բացասական հետևանքների վերացմանը տնտեսվարող սուբյեկտների՝ շուկայում տեղաշարժման ժամանակ:

Սրա հիմնական մեխանիզմը կայանում է նրանում, որ անվճարունակության գործընթացում հաշվի առնվեն և պահպանվեն երկու կողմերի շահերը՝ ինչպես պարտատիրոջ, այնպես էլ պարտապանի: Թե պարտատերը, թե պարտապանը պետք է դիտարկվեն որպես իրավահավասար գործընկերներ տվյալ սուբյեկտի տնտեսական վիճակը շտկելու հարցում, քանզի անվճարունակության իրավիճակում նրանք դառնում են միմյանցից կախված:

Այս սկզբունքային մոտեցումը անվճարունակության իրավիճակի վերաբերյալ թույլ է տալիս արձանագրել անվճարունակության մասին օրենսդրության հետևյալ նպատակները՝

1. պահպանել տնտեսվարող սուբյեկտի կենսունակությունը, այսինքն՝ իրավական մեխանիզմների միջոցով օգնել ձեռնարկությանը՝ մնալ գույքային շրջանառության, բիզնեսի մեջ, երբ նրա պահպանումը առավել ձեռնտու է նրա սեփականատերերի համար, քան նրա հեռացումը բիզնեսից:

Անվճարունակության օրենսդրության նպատակի նման ընկալումը ելնում է նրանից, որ ժամանակակից ընկերությունների համար բնութագրական է սեփականության և կառավարման տարանջատումը, ինչի հետևանքով ֆինանսական բարդությունները կարող են արդյունք լինել վատ կառավարման և ոչ թե սեփականատերերի գործողությունների: Հետևաբար սեփականատերերը անվճարունակության դեպքում պետք է չտուժեն, կամ նրանց կրած վնասները պետք է լինեն նվազագույն:

2. Անվճարունակության գործընթացում ապահովել վերահսկողությունը այն բանի նկատմամբ, որպեսզի ակտիվները չփոշիանան և օգտագործվեն առավել արդյունավետ: Առանձնապես սուր այս հարցը կանգնում է այն ժամանակ, երբ անվճարունակ ձեռնարկությունն ունի մեկից ավելի սեփականատեր: Այս իրավիճակում օրենսդրությունը պետք է նախատեսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան իրականացնել սեփականատերերի շահերի պաշտպանությունը որպես խմբի, առավելություն չտալով որևէ մեկին և հետևելով, որպեսզի նման առաավելություն չտրվի սեփականատերերից որևէ մեկին՝ պարտատերերի կողմից:

3. Ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը՝ ապահովելով նրանց պահանջների մաքսիմալ բավարարումը անվճարունասակ պարտապանի նկատմամբ:

2. «Անվճարունակություն» և «սնանկություն» հասկացությունների հարաբերակցությունը

Հայկական օրենքը, ինչպես նմանատիպ այլ օրենքներ, կիրառում են «անվճարունակ» և «սնանկ» հասկացությունները՝ համարելով դրանք հոմանիշներ: Հարց է ծագում. իսկապես «անվճարունակությունը» նշանակում է «սնանկություն» և հակառակը, թե այդ տերմիններն ունեն ինքնուրույն նշանակություն և հետևաբար պետք է դրանք տարանջատել: Գործող օրենքն այդ տարանջատումը չի տալիս և սա կարելի է համարել օրենքի հիմնական թերություններից մեկը:

Որոշ տեսաբաններ արտահայտում են այն տեսակետը, որ սնանկություն պետք է համարել այն անվճարունակությունը, որը զուգորդվում է պարտապանի այնպիսի մեղավոր վարքագծի հետ, որը վնաս է պատճառում պարտատերերին կամ նման նպատակ ունի: Ահավասիկ, 1753թ. Ռուսաստանի «Սնանկության կանոնադրության» մեջ կիրառվում են ինչպես «սնանկություն», այնպես էլ «անվճարունակություն» տերմինները, սակայն երբ խոսք է գնում առևտրականների անբարեխիղճ վարքագծի մասին, ապա միանշանակ կիրառվում է «սնանկ» տերմինը: Այսպես, կանոնադրությունը նկարագրում է այն ժամանակներում շատ տարածված մի երևույթ, երբ առևտրականները պարտք են վերցնում խոշոր գումարներ՝ դրամով և ապրանքներով, այնուհետև իրենց հայտարարում են սնանկ, իսկ որոշ ժամանակ անց այդ հափշտակված գումարներով կրկին մտնում են գույքային շրջանառության մեջ՝ չբավարարելով պարտատերերին, իսկ ներկայացված պահանջներին նրանք պատասխանում են, որ վրա հասած դժբախտությունից հետո ստացել են ժառանգություն կամ այդ գույքը ձեռք են բերել այլ ճանապարհով: Այս կոնտեքստով հիշատակված կանոնադրությունը երբեք չի կիրառում «անվճարունակ» տերմինը: Վերջնականապես այդ հարցը լուծում է ստացել 1832թ. Կանոնադրությամբ, համաձայն որի սնանկությունը անվճարունակության պարտադիր հատկանիշը չէ: Մինչհեղափոխական ռուս տեսաբանների մեծ մասը հակված էր այս կարծիքին: Մասնավորապես, դարասկզբի իրավաբան Գ.Շերշենեվիչը գտնում էր, որ սնանկությունը ենթադրում է անվճարունակություն, սակայն անհրաժեշտ է անվճարունակության և պարտապանի հանցավոր գործողությունների համաժամանակյա առկայությունը, և դրանց միջև պատճառական կապ փնտրել պետք չէ: Ա. Տրայնինը գրում էր, որ. «սնանկությունը յուրատեսակ

դելիկտ է. այն կազմված է երկու էլեմենտից, որից մեկը՝ անվճարունակությունը, քաղաքացիական իրավունքի հասկացություն է, մյուսը՝ սնանկությունը, քրեաիրավական հասկացություն է: Սնանկության բաղկացուցիչների այս բարդ կառուցվածքը լրջորեն բարդացնում է նրա իրավաբանական բնույթի էությունը»:

Այս բանավեճից ծնվում է մեկ այլ, ոչ պակաս կարևոր հարց. որ պահից պետք է կիրառվեն քրեաիրավական նորմերը սնանկի նկատմամբ: Կար տեսակետ, որ քրեական հետապնդումը պետք է տարվի անկախ քաղաքացիական դատարանի որոշումից, ընդ որում քրեական գործ հարուցելու համար բավարար է վճարումները դադարեցնելու փաստի ընթացքում հանցավոր արարքի հատկանիշների առկայությունը: Սակայն սնանկության հարցը քրեական դատարանի կողմից որոշելը՝ մինչև քաղաքացիական դատավարության կարգով անվճարունակության հարցի պարզումը կարող է առաջ բերել երկու յուրիսդիկցիաների ընդհարում: Գ.Շերշենեվիչը գտնում էր, որ եթե «անձը, ում նկատմամբ քաղաքացիական դատարանը բացառել է անվճարունակության առկայությունը, կդատապարտվի որպես սնանկ քրեական դատարանի կողմից, կամ հակառակը, երբ անձը անվճարունակ կհայտարարվի քաղաքացիական դատարանի կողմից և կազատվի քրեական հետապնդումից, չնայած մրցութային պրոցեսում ի հայտ են եկել հանցանշաններ, կբերի դատական համակարգի հեղինակության անկմանը և բազմաթիվ սխալների, թեկուզև այն պատճառով, որ քաղաքացիական դատարանն առավել կոմպետենտ է սնանկության հարցերով, քան քրեականը»: Այսինքն, քրեական դատարանի կոմպետենցիան պետք է սկսվի այն պահից, երբ անվճարունակության և դրա հատկանիշների հարցն այլևս լուծված է քաղաքացիական դատարանի կողմից:

«Սնանկ» և «անվճարունակ» հասկացությունները շատ հստակ էին տարանջատվում Ֆրանսիայում: Պատմությունից հայտնի է հետևյալ հետաքրքիր փաստը. Պետական խորհրդի կողմից համապատասխան օրինագծի քննարկման ժամանակ Նապոլեոնը պնդում էր մի ձևակերպման վրա, համաձայն որի. «սնանկ պետք է համարել յուրաքանչյուր անվճարունակի, քանի դեռ նա չի ապացուցում պարտատերերին վնաս պատճառելու մտադրության բացակայությունը և դատարանից չի ստացել իրեն արդարացնող վկայություններ»: Սակայն այս առաջարկը համարվեց բավականին խիստ և տեղ չգտավ օրենքում:

Նշված տերմինների տարանջատման փորձ է կատարվել նույնիսկ խորհրդային իրավունքում, ՆԵՊ-ի ժամանակահատվածում, սակայն այս տեսությունն իր զարգացումը չստացավ, քանզի ՆԵՊ-ի վերացման հետ մեկտեղ, խորհրդային իրավունքում վերացվեց անվճարունակության ինստիտուտը:

Որոշ երկրներում, Մասնավորապես ԱՄՆ-ում օգտագործվում է միայն «սնանկ» տերմինը: Բելառուսում այս երկու տերմինները հստակ

տարանջատված են: Ռուսական օրենքի, որին շատ հարցերում նմանակում է հայկական անալոգը, հեղինակներից մեկը՝ Պ.Բարենբոյմը գտնում է, որ «օրենսդիրը շատ ճիշտ է վարվել՝ անվճարունակություն տերմինը «սնանկ» տերմինով ամրապնդելով: Այս տերմինը շատ տարածված և ուժեղ տերմին է» նրա կարծիքով:

Նման մոտեցումն անընդունելի է, քանի որ մրցութային վարույթի դադարեցումը դադարեցնում է քաղաքացիաիրավական հետևանքները, այսինքն անվճարունակության հետևանքները, և ոչ սնանկության: Սնանկության համար մեղավոր անձանց քրեաիրավական հետապնդումը պետք է շարունակվի նաև անվճարունակության գործի վարույթի ավարտից հետո: Այսպիսով, անհրաժեշտ է նոր օրենքում հստակ տարանջատում մտցնել «սնանկություն» և «անվճարունակություն» տերմինների միջև և «սնանկություն» հասկացությունը կիրառել պարտապանի ոչ օրինաչափ գործողություններով պարտատերերին վնաս պատճառելու դեպքում:

3. «Անվճարունակության» սահմանումը՝ տեսություն և պրակտիկա

Այս հարցը թերևս քննարկվելիք հարցերի շարքում ամենապրոբլեմատիկն է: Ի սկզբանե ասեմ, որ թե գործող օրենքի, թե ենթաբաժնի նախագծի լուծումները միարժեքորեն ընդունելի համարել չի կարելի:

ՀՀ գործող օրենսդրությունը պարունակում է սնանկության երկու բնորոշում: «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկության) և ֆինանսական առողջացման մասին» 1996թ. օրենքի երկրորդ հոդվածի համաձայն. «անվճարունակ (սնանկ) կարող է ճանաչվել այն պարտապանը, որը պարտատերերի հանդեպ ստանձնած պարտավորության (պարտավորությունների) կատարման ժամկետը լրանալուց 30 օր հետո չի կատարել իր պարտավորությունները կամ պարտատերերի համար ընդունելի այլ բավարարում չի տվել և 30-օրյա և ավելի ժամկետանց պարտքերի հանրագումարը գերազանցում է մեկ միլիոն դրամը»: Մյուս ձևակերպումը տրվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 28 և 71 հոդվածներում, որոնց համաձայն. քաղաքացին, այդ թվում անհատ ձեռնարկատերը և իրավաբանական անձը դատարանի վճռով կարող են սնանկ ճանաչվել, եթե նրանք ի վիճակի չեն բավարարել պարտատերերի պահանջները: Կա արդյոք հակասություն այս երկու ձևակերպումների միջև, ինչպես են դրանք հարաբերակցվում: Այս հարցերին պատասխանելու համար ահնրաժեշտ է բացահայտել անվճարունակության հատկանիշներն ու բովանդակությունը:

Մրցութային իրավունքի տեսությունը առանձնացնում է հատկանիշների երկու մակարդակ՝ ներքին և արտաքին:

Հատկանիշների ներքին մակարդակը դա տվյալ ձեռնարկությունում գործերի վիճակն է, նրա ակտիվների և պասիվների հարաբերակցությունը: Անվճարունակության դեպքում հատկանիշների այդ մակարդակը արտահայտվում է գույքի անբավարարության մեջ, իսկ որոշ պետությունների օրենսդրական տերմինալոգիայով՝ գերպարտավորվածության մեջ (փՌԻՑՈՆ ջՈՊՏսԶպվՎՏրՅՖ):

ՀՀ գործող օրենքը անվճարունակության ներքին հատկանիշներ չի նախատեսում: Ի տարբերություն դրան, ՀՀ ՔԴՕ ենթաբաժնի նախագծի 166 հոդվածի առաջին մասը սահմանում է, որ. «Պարտապանն իրավունք ունի իրեն սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմել դատարան այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ նա ի վիճակի չէ սահմանված ժամկետում կատարել իր պարտավորությունները (սնանկության իրական սպառնալիք)»: Չնայած նախագիծը ուղղակի չի սահմանում սնանկության իրական սպառնալիքի դեպքերը, սակայն դրանք հետևյալներն են՝

- ակտիվների և պասիվների բացասական հարաբերակցությունը, այսինքն ձեռնարկության պարտավորությունների ամբողջությունը, որտեղ ընդգրկվում են վարկային և այլ ներգրավված միջոցները, կրեդիտորական պարտավորությունները, գերազանցում է ձեռնարկության գույքի արժեքը, որի կազմում կարող են ընդգրկվել հիմնական միջոցները, այլ երկարաժամկետ ներդրումները, շրջանառու միջոցները, ֆինանսական ակտիվները.

- հաշվեկշռի անբավարար կառուցվածքը. պարտապանի գույքի և պարտավորությունների այնպիսի վիճակը, երբ գույքի հաշվին չեն կարող ժամանակին բավարարվել պարտատերերի պահանջները՝ այդ գույքի ցածր լիկվիդայնության պատճառով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ևս չի տալիս անվճարունակության ներքին հատկանիշների ցանկը կամ հասկացությունը, մտցնելով սուսկ «ի վիճակի չէ» տերմինը:

Հատկանիշների արտաքին մակարդակը դա ձեռնարկության ֆինանսական հարաբերությունների արտահայտությունն է կրեդիտորների և պետության հետ (հարկային մարմիններ, արտաբյուջետային ֆոնդեր և այլն): Անվճարունակության դեպքում հատկանիշների այս մակարդակը արտահայտվում է պարտապանի կողմից իր պարտավորությունների չկատարման մեջ: Տեսաբանները այս մակարդակին են դասում հետևյալ դեպքերը՝

- պարտատերերի օրինական պահանջներով վճարումների դադարեցումը.

- պարտապանի հայտարարությունը իր անվճարունակության մասին.
- պարտապանի փախուստը, գտնվելու վայրն անհայտ լինելը.
- բռնագանձման ընթացքում գույքի անբավարարության ի հայտ գալը:

Ժամանակակից իրավական տեսությունը երկրորդ և երրորդ արտաքին հատկանիշները դիտարկում են որպես անվճարունակության հետևանք կամ որպես չարամիտ սնանկության արտահայտություն:

Անվճարունակության մասին գործող օրենքը սահմանում է մեկ արտաքին հատկանիշ. պարտապանի կողմից ընթացիկ վճարումների դադարեցումը մեկ ամսվա ընթացքում պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուց հետո:

Ըստ էության, գործող օրենքը, չսահմանելով անվճարունակության ներքին հատկանիշների մակարդակ, սահմանում է սուկ մեկ արտաքին հատկանիշ: Չնայած գործող օրենքը որպես երրորդ արտաքին հատկանիշ նշում է պարտավորությունների հանրագումարի մեկ միլիոն դրամից ավելի լինելու հանգամանքը, սակայն այս հատկանիշը ինքնուրույն նշանակություն չունի: Այն համարվում է լրացուցիչ և պարտադիր առաջին և երկրորդ հատկանիշների համար:

Ի տարբերություն գործող օրենքի, ՔԴՕ ենթաբաժնի նախագիծը սահմանում է հետևյալ արտաքին հատկանիշները՝

- պարտապանի կողմից իր պարտավորությունները կատարելու ակնհայտ անհնարինությունը (պարտապանի՝ դատարան դիմելու իրավունքի պարագայում).
- մեկ կամ մի քանի պարտատերերի մեկ կամ մի քանի պահանջների բավարարման պայմաններում այլ պարտատերերի՝ պահանջների լրիվ բավարարման անհնարինությունը (պարտապանի՝ դատարան դիմելու պարտականության պարագայում).
- բռնագանձման ընթացքում պահանջները բավարարելու անկարողության ի հայտ գալը (պարտատիրոջ՝ դատարան դիմելու իրավունքի պարագայում):

Ընդ որում պետք է ի նկատի ունենալ, որ այս հատկանիշների համաժամանակյա առկայությունը բացառվում է, քանի որ սրանցից յուրաքանչյուրը նախատեսված է դատարան դիմելու առանձին դեպքերի առումով՝ պարտապանի իրավունք, պարտապանի պարտականություն, պարտատիրոջ իրավունք:

Հետաքրքրության է արժանի ՔԴՕ նախագծում ամրագրված առաջին արտաքին հատկանիշի ժամանակ կիրառվող «ակնհայտ» տերմինը, երբ խոսքը գնում է պարտավորությունների կատարման անհնարինության մասին: Սակայն օրենքի նախագծում այս տերմինի բացատրությունը չի տրվում:

Բառակազմական իմաստով այս տերմինը նշանակում է լավ հայտնի, հանրաճանաչ, անվիճելի փաստ: Հետևաբար «պարտապանի կողմից իր պարտավորությունները կատարելու ակնհայտ անհնարինությունը» կարող է ի հայտ գալ միայն պարտապանի ֆինանսական և գույքային վիճակի վերլուծությունից հետո, այսինքն անվճարունակության ներքին հատկանիշի (հատկանիշների) հայտնաբերելուց հետո:

Ինչ իրավիճակ ենք ունենում այս պարագայում: Առաջին երկու դեպքում տեսականորեն հնարավոր է անվճարունակություն առանց արտաքին հատկանիշի առկայության, երրորդ դեպքում սակայն սա սուսկ տեսականորեն, հնարավոր է անվճարունակություն՝ առանց ներքին հատկանիշի:

Անվճարունակության հասկացության վերլուծությունն իրականացնող որոշ տեսաբաններ գտնում են, որ անվճարունակության առկայության համար միշտ պետք է առկա լինի իրավիճակ, երբ միաժամանակ գոյություն ունեն առնվազն մեկ ներքին և առնվազն մեկ արտաքին հատկանիշ:

Հնարավոր իրավիճակները կարող են բազմազան լինել, մասնավորապես՝

- պարտապանի հաշվեկշռի անբավարար կառուցվածքը և պարտավորության չկատարումը մեկ ամսվա (երեք ամսվա) ընթացքում.
- պարտապանի հաշվեկշռի անբավարար կառուցվածքը, ինչի հետևանքով ակնհայտ անհնարին է պարտապանի կողմից իր պարտավորությունները կատարումը.
- պասիվների գերազանցումը ակտիվների նկատմամբ պարտապանի հաշվեկշռում և պարտատերերին բավարարում չտրամադրելը մեկ ամսվա ընթացքում.
- պասիվների գերազանցումը ակտիվների նկատմամբ պարտապանի հաշվեկշռում, ինչի հետևանքով ակնհայտ անհնարին է պարտապանի կողմից իր պարտավորությունները կատարումը:

Ըստ որոշ տեսաբանների՝ արտաքին և ներքին հատկանիշների առկայությունը միմյանցից անկախ, չի կարող հիմք հանդիսանալ անձին անվճարունակ ճանաչելու համար:

Սակայն խնդրի լուծման բանալին գտնվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում տրված «սնանկության» հասկացության բովանդակության մեջ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքը տալիս է անվճարունակության ընդհանուր ձևակերպումը՝ չնշելով դրա ներքին և արտաքին հատկանիշները: Կախված նրանից, թե ինչպիսի մեկնաբանություն կտրվի «կարող են սնանկ ճանաչվել, եթե նրանք ի վիճակի չեն բավարարել պարտատերերի պահանջները» դրույթին, պարզ կդառնա, թե որ լուծումը կամրագրվի որպես անվճարունակության հասկացություն:

Մեր կարծիքով անվճարունակության արտաքին հատկանիշը ինքնուրույնաբար պետք է հնարավորություն ստեղծի անվճարունակի կարգավիճակ ստանալու համար: Ներքին հատկանիշների համար

սահմանված են շատ խիստ չափանիշներ, ինչի հետևանքով թեկուզև վնասով աշխատող սուբյեկտը, որն իր ֆինանսական ներքին ռեզերվների հաշվին կարողանում է հետաձգել անվճարունակության արտաքին հատկանիշի ի հայտ գալը, դրանով իսկ հետաձգում է իր անվճարունակությունը: Արդյունքում ունենում ենք իրավիճակ, երբ ոչ միայն ավելանում են տվյալ սուբյեկտի պարտավորությունները, այլև կտրուկ սկսում են նվազել ակտիվները, հիմնականում բարձր լիկվիդայնություն ունեցող գույքը, ինչը նվազեցնում է պարտատերերի պահանջների հետագա բավարարման հնարավորությունը: Այսպիսով, օրենսդրի կողմից արտաքին հատկանիշի գերակայության սահմանումը ներքին հատկանիշների նկատմամբ համարում ենք առավել ճիշտ և արդյունավետ լուծում:

Օտարերկրյա պետությունների մեծամասնության իրավունքը թույլ է տալիս անվճարունակ հայտարարել անձին ոչ միայն ներքին և արտաքին հատկանիշների միաժամանակյա առկայության պայմաններում, այլև նրանցից միայն մեկի առկայության դեպքում: Ահավասին, 1994թ. նոր գերմանական օրենսդրությունը անվճարունակության մասին գործի հարուցման հիմք է համարում անվճարունակությունը, անվճարունակության վտանգը և գերպարտավորվածությունը: Ցանկացած նշված դեպքում գերմանական դատարանը պարտավոր է որոշում կայացնել պարտապանի անվճարունակության մասին:

Անվճարունակությունը գերմանական իրավունքի համաձայն դա վճարումների դադարեցումն է, այսինքն արտաքին հատկանիշը: Անվճարունակության վտանգը առկա է այն դեպքում, երբ պարտապանն ի վիճակի չի լինի կատարել իր պարտավորություններ՝ դրանց կատարման ժամկետի վրա հասնելու պահին: Ապագա անվճարունակության որոշիչը դա ստացվելիք և կատարվելիք վճարումների հարաբերակցությունն է: Գնահատման օբյեկտիվ չափանիշը ֆինանսական պլանն է, որը ներառում է լիկվիդային միջոցները, կրեդիտորաական և դեբիտորական պարտքերը: Ֆինանսական պլանում պետք է արտացոլվեն տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական վիճակի զարգացումը մինչև պարտավորությունների կատարման ժամկետը:

Անվճարունակության վտանգի դեպքում դիմելու իրավունքը պատկանում է բացառապես պարտապանին: Ներքին այս հատկանիշին առավելություն տալը հիմնավորվում է նրանով, որ ըստ էության պարտապանը բոլորից լավ է տիրապետում իր տնտեսական վիճակին և նա առավել շահագրգռված պետք է լինի իր պարտավորությունների կատարման հարցում:

Մաքուր կամ գերպարտավորվածությունը ըստ գերմանական օրենքի որոշվում է գույքի և պարտավորությունների չափի հարաբերակցությամբ:

Այսպիսով, գերմանակն օրենսդրությունը, ի տարբերություն ՌԴ նախկին օրենսդրության, ՀՀ ՔԴՕ ենթաբաժնի նախագծի, անվճարունակության գործի հարուցումը առաջ է բերում դեպի ավելի վաղ ժամկետներ, քանզի հարուցման

համար անհրաժեշտ է թեկուզ մեկ ներքին կամ մեկ արտաքին հատկանիշի առկայություն: Այս ժամանակային տեղաշարժի արդյունքում հավասար այլ պայմանների առկայության դեպքում մեծանում է պարտատերերի միջև բաշխվող գույքի ծավալը: Մրցութային զանգվածի մեծացումը բերում է նրան, որ առաջին հերթին մեծանում է անվճարունակության գործերի քանակը, և երկրորդ, պարտատերերի բավարարում ստանալու հավանականությունը մեծանում է:

Այլ պետությունների օրենսդրություններում ևս (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Չինաստան, Լեհաստան) օրենսդրորեն լուծվում է միայն այն խնդիրը, թե ինչ հիմքերի առկայության դեպքում այս կամ այն սուբյեկտը կարող է դիմել դատարան՝ անձին անվճարունակ ճանաչելու պահանջով: Նախադեպային իրավունքի երկրներում անվճարունակ հայտարարելու հիմքերի առկայության հարցը լուծում է դատարանը: Ընդ որում դատարանը իրականացնում է պարտապանի գույքի գնահատում, որոշելու համար պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունը:

Ներկայումս ոչ միայն Հայաստանում, այլև ԱՊՀ այլ պետություններում ընթանում է անվճարունակության մասին օրենսդրության փոփոխությունների գործընթաց: Մասնավորապես ՌԴ-ում, որն արդեն ընդունել է անվճարունակության մասին նոր օրենքը, ընդունվել է այն մոտեցումը, որ անվճարունակության հատկանիշ է համարվում պարտապանի պարտավորությունների կատարման եռամսյա կետանցը: Ընդ որում՝ իր անվճարունակության բացակայության ապացուցման պարտականությունը կրում է հենց պարտապանը:

Ելնելով վերը շարադրվածից, գտնում ենք՝

1. անհրաժեշտ է հայեցակարգային առումով ընդունելի համարել այն ձևակերպումը, որն առկա է անվճարունակության մասին գործող օրենքում, իհարկե որոշակի խմբագրությունների ենթարկելով այն, մասնավորապես խոսքը վերաբերում է պարտավորությունների գումարային հանրագումարի առավել խելամիտ չափ նախատեսելուն

2. անհրաժեշտ է ընդունել ՔԴՕ ենթաբաժնի նախագծի 166 հոդվածով սահմանված անվճարունակության իրական սպառնալիքի հասկացությունը, սակայն գտնում ենք, որ պարտատերերի պահանջների բավարարման անկարողության ակնհայտ սպառնալիքի դեպքում անհրաժեշտ է ամրագրել դատարան դիմելու պարտապանի ոչ թե իրավունքը, այլ պարտականությունը

3. գտնում ենք, որ պարտապանին իրավունք վերապահելով անվճարունակության հայցով դատարան դիմելու միայն գույքի բռնագանձման վճռի կատարման անհնարինության դեպքում, լուրջ խնդիրներ են առաջանում կապված փոխադարձ չվճարումների ծավալների մեծացման և անվճարունակ պարտապանի գույքի փոշիացման առումով: Ակնհայտ է, որ այս փուլում արդեն ֆինանսական առողջացման հնարավորությունները ևս հասցվում են նվազագույնի:

4. «Մանացիան» և դրա որոշ առանձնահատկություններ

Մանացիայի հետ կապված հիմնական խնդիրը ՀՀ ՔԴՕ նախագծի 218 հոդվածում ամրագրված նախապայմանն է: Համաձայն նախագծի այս դրույթի՝ սանացիայի նախապայման է համարվում. «մինչև դրա սկսելը պարտատերերի պահանջների ընդհանուր գումարի առնվազն 50 տոկոսի բավարարումը»:

Մեր կարծիքով, նման նորմի ամրագրումը բացառում է սանացիայի հնարավորությունը:

Ֆինանսական առողջացումը մի միջոցառում է, որն ըստ էության պահանջում է լուրջ ֆինանսական ներդրումներ, որոնք առավել ևս մեր շուկայի նման չկայացած և անկայուն շուկաների պայմաններում շատ դժվար է ներգրավել: Այդ իսկ պատճառով պետություններն իրենց օրենսդրություններում փորձում են լուրջ խթաններ նախատեսել սանացիայի կիրառման համար:

Նման նախապայմանը ոչ թե խոչընդոտում, այլ միարժեքորեն բացառում է սանացիա իրականացնելու հնարավորությունը:

Քննարկման են արժանի նաև սանացիայի անցկացման նախապատվության հետ կապված հարցերը: Համաձայն նախագծի 218 հոդվածի՝ սանացիայի անցկացման նախապատվության իրավունքը պատկանում է պարտապանի պարտատերերին: Դրույթն անվիճելի է, սակայն արդյոք չկան որոշակի բացառություններ: Սանացիայի նախապատվության իրավունքի իմաստը կայանում է նրանում, որպեսզի այդ խնդրով զբաղվեն այն սուբյեկտները, որոնք ամենաշատն են շահագրգռված տվյալ իրավաբանական անձի առողջացման հարցում: Քննարկման է արժանի սանացիայի անցկացման նախապատվության իրավունքը ընկերակցության մասնակիցներին տրամադրելու հարցը, երբ պարտապանը ընկերակցությունն է:

Անհաջող են սանացիային վերաբերող բաժինների դրույթները նաև օպերատիվության տեսանկյունից: Այս թերությունն առկա է թե նախագծում, թե գործող օրենքում: Համաձայն գործող օրենքի, սանացիայի ծրագիրը ներկայացվում է աանվճարունակ ճանաչելուց հետո 60 օրվա ընթացքում, եթե դատարանի որոշմամբ ժամկետը չի հետաձգվել մինչև 90 օր: Համաձայն նախագծի՝ անորոշ ժամկետ է սահմանվում սանացիայի նպատակահարմարությունը հիմնավորելու միջնորդություններ ներկայացնելու համար, իսկ դրանից հետո էլ 30-օրյա ժամկետում ներկայացվում են ծրագրերը: Եթե նախապատվության իրավունք ունեցող անձանց կողմից միջնորդություններ չեն ներկայացվում, ապա դատարանը հայտարարում է մրցույթ, որտեղ նորից սկսում են հոսել նույն ժամկետները: Գտնում ենք, որ ժամանակի նման շոայլությունը չի կարող նպաստել անվճարունակ անձի վիճակի բարելավմանը:

5. Սնանկության իրավահարաբերությունները կանոնակարգող օրենքը

Սեմինարի խնդիրներից մեկը պետք է լինի պատասխանն այն հարցին, թե ինդրո առարկա իրավահարաբերությունները որ օրենքով պետք է կանոնակարգվեն: Այն մոտեցումը, որ ժամանակակից կոդիֆիկացիան ընթանում է համասեռ իրավահարաբերությունները մեկ միասնական ակտում մաքսիմում ընդգրկումով կանոնակարգելու ուղղությամբ, անհերքելի է, սակայն սա չի կարող հիմնավորում հանդիսանալ սույն հարաբերությունները ՔԴՕ-ով կանոնակարգելու համար, քանզի հենց նույն օրենսգրքի նախագծում (հոդված 164, կետ 2) հղում է կատարվում «Բանկերի սնանկացման մասին» օրենքին, որով պետք է կանոնակարգվեն բանկերի սնանկացման հետ կապված հարաբերությունները: Այս տեսակետի անուղղակի հիմնավորումն է նաև այն հանգամանքը, որ նշված հարաբերությունները ՔԴՕ կարգավորելու որևէ պրակտիկա գոյություն չունի:

Առաջին հայացքից այս խնդիրը սուկ տեխնիկական է և որևէ լուրջ տարբերություն չկա, թե հասարակական հարաբերությունները որ օրենքով կկարգավորվեն: Սակայն երբ հարցը քննարկվում է նյութական և դատավարական իրավունքի տարանջատման տեսանկյունից, ակնհայտ է դառնում, որ անվճարունակության վարույթը պարունակում է մի շարք նյութական իրավունքի դրույթներ, որոնք դատավարական օրենսգրքով կանոնակարգելը կարող է մեթոդոլոգիական սխալների հանգեցնել: Ահավասիկ, ՔԴՕ ենթաբաժնի նախագծի 210 հոդվածի 3-րդ կետը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70 հոդվածի առաջին կետի բառացի վերարտադրությունն է:

6. Մի շարք հարցեր, որոնք ենթակա են քննարկման նոր օրենսդրության մշակման ընթացքում

Կարևորագույն հարցերից մեկը, որը կուզենայի ներկայացնել սեմինարի մասնակիցների քննարկմանը, դա անվճարունակության գործերի վարույթը ընդհանուր իրավասության դատարանների իրավասությանը հանձնելու նպատակահարմարության հարցն է: Նախ նշեմ, որ այսօր դատական համակարգն աշխատում է գերձանրաբեռնվածության ռեժիմում: Սրա պատճառը ինչպես դատավորների թվակազմի պակասն է, այնպես էլ առաջին ատյանի դատարանների մակարդակում մասնագիտացվածության բացակայությունը: Անհնար է ապահովել անվճարունակության գործերի

քննության բարձր մակարդակ, երբ նույն դատավորը քննում է և քրեական, և քաղաքացիական, և տնտեսական, և վարչական բնույթի գործեր:

Գոյություն ունի մեկ խնդիր ևս: ՀՀ ՔԴՕ-ում վերջերս կատարվեցին փոփոխություններ, որոնց արդյունքում դատական ակտերի բեկանման դեպքում գործերը ուղարկվում են ոչ թե առաջին աստիճանի դատարան, այլ վերաքննիչ դատարան, անկախ այն բանից, թե որ դատարանն է վճիռ կայացրել: Անվճարունակության գործերով վերաքննության պարագայում ըստ էության այդ գործերը դառնում են վերաքննիչ դատարանի վարույթի գործեր, ինչը խելամիտ համարվել չի կարող:

Ի նկատի ունենալով անվճարունակության գործերի առանձնահատկությունները և դրանց առանձնակի բարդությունը, առաջարկում ենք ստեղծել անվճարունակության հարցերով մասնագիտացված դատարան, որտեղ գործերը կքննվեն միանձնյա կարգով, իսկ վարույթի ընթացքում ընդունվող և բողոքարկման ենթակա դատական ակտերը իրավունքի խախտման հիմքով կանցնեն միայն վճռաբեկության փուլ: Սա կապահովի ինչպես անվճարունակության գործերի պատշաճ մակարդակով քննությունը, դատական անհրաժեշտ վերահսկողության առկայությունը, այնպես էլ լուրջ օպերատիվություն կմտցնի այս գործերի քննության պրակտիկայում:

Թե ՔԴՕ նախագծում, թե գործող օրենքում սկզբունքորեն անընդունելի է տարբեր կատեգորիաների պարտապանների նկատմամբ կիրառվող անվճարունակության բացարձակ միատեսակ ընթացակարգերի ամրագրման փաստը: Թեև գործող օրենքը որոշակի առանձնահատկություններ է նախատեսել տնտեսական ընկերակցությունների անվճարունակության ընթացակարգերում, սակայն այդ լուծումները հեռու են բավարար լինելուց: Նոր օրենքում անհրաժեշտ է հատուկ բաժին կամ գլուխ նախատեսել առանձին կատեգորիաների պարտատերերի անվճարունակության վերաբերյալ, որտեղ կրղզրկվեն ինչպես վարկային կազմակերպությունների, այնպես էլ ապահովագրական կազմակերպությունների, արժեթղթերի շուկայում գործող մասնագիտացված կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի անվճարունակության հետ կապված առանձնահատկությունները: Օրենքը պետք է նախատեսի նաև անվճարունակության պարզեցված ընթացակարգ լուծարվող կամ բացակայող պարտապանի անվճարունակության համար:

Այսօր առկա են բազմաթիվ իրավաբանական անձինք, որոնք պրակտիկորեն որևէ գույք չունեն, հաշվեկշռում բացակայում են ակտիվները: Նման ձեռնարկությունների, որոնք վաղուց արդեն գոյություն ունեն սոսկ թղթի վրա, անվճարունակության գործընթացի հեռանկարը շատ մշուշոտ է: Նման կազմակերպություններում անվճարունակության ընթացակարգ սկսելն իսկ լուրջ բարդություններ կարող է առաջ բերել միջոցների իսպառ բացակայության հետևանքով: Այսինքն շատ հնարավոր է իրավիճակ, երբ

պարտատերերին ձեռնտու է որևէ ընթացակարգ չսկսել այդ անձի նկատմամբ, որովհետև ի սկզբանե ակնհայտ է, որ միջոցների որևէ վերադարձ, պարտավորությունների որևէ բավարարում տեղի չի ունենա: Արդյունքում ունենում ենք հազարավոր իրավաբանական անձինք, որոնք թեև վաղուց դադարեցրել են իրենց գոյությունը, սակայն պաշտոնապես գոյություն ունեն: Քննարկման է արժանի այն տեսակետը, երբ անվճարունակության վարույթի հարուցման ժամանակ դատարանին իրավունք է վերապահվում առանց համապատասխան ընթացակարգերի լուծարված համարել իրավաբանական անձը, երբ պարզվում է նրա մոտ գույքի իսպառ բացակայությունը: Այս մոտեցումը հնարավորություն կընձեռնի մաքրել այսօրվա բավականին խճճված դաշտը:

Հ. Մանուկյան
ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ
դատարանի նախագահ